



ԱՐՅԱԽԻ  
ՆԱԼՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ  
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



ԵՐԵՎԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



«ԱՐՅԱԽ»  
ԳԻՏԱՆԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ



# ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ



SCIENTIFIC  
ARTSAKH

НАУЧНЫЙ  
АРЦАХ

Հիմնադիր – Founder – Учредитель:  
ԵՐԵՎԱՆԻ ԴԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ԵՊՀ)  
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)  
[www.y su.am](http://www.y su.am)

Հրատարակիչ – Publisher - Издатель:  
ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)  
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)  
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)  
[www.aegmm.org](http://www.aegmm.org)

**ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ**

**SCIENTIFIC ARTSAKH**

**НАУЧНЫЙ АРЦАХ**

**№ 2(5), 2020**

*«Գիտական Արցախ» պարբերականն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման կոմիտեի (ՀՀ ԲՈԿ) սահմանած դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների ու դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:*

*«Գիտական Արցախ» պարբերականը պետեղված է [www.elibrary.ru](http://www.elibrary.ru) կայքում:*

*The «Scientific Artsakh» journal is included in the list of scientific periodicals acceptable for publication of the main results and provisions of doctoral and candidate theses established by the Higher Attestation Committee of the Republic of Armenia (HAC RA).*

*The «Scientific Artsakh» journal is posted on [www.elibrary.ru](http://www.elibrary.ru) website.*

*Журнал «Научный Арцах» включен в список научных периодических изданий, приемлемых для публикации основных результатов и положений докторских и кандидатских диссертаций, установленных*

*Высшим аттестационным комитетом Республики Армения (БАК РА).*

*Журнал «Научный Арцах» размещен на сайте [www.elibrary.ru](http://www.elibrary.ru).*

«ԱՐՑԱԽ» հրատ. – «ARTSAKH» Publ. – Изд. «АРЦАХ»  
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН  
2020

Տպագրվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Համարը հրատարակության է երաշխավորել «Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհուրդը

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**Լախագահ՝ Արամ ՍԻՄՈՆՅԱՆ**, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գլխավոր խմբագիր՝ Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Թեմինա ՄԱՐՈՒԹՅԱՆ**, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

### Անդամներ՝

**Լենա ԱՄՐՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր (**Տառագոնա, Իսպանիա**)

**Արծրուն ԱՎԱԳՅԱՆ**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Հրանտ ԱՎԱՆԵՍՅԱՆ**, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Դավիթ ԲԱԲԱՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Վահրամ ԲԱԼԱՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Խաչիկ ԳԱԼՍՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Զուլիետա ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ**, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Վլադիսլավ ԳՐՈՒՉՂԵՎ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Կոստրոմա, ՌԴ**)

**Գևորգ ԴՎՆԻԵԼՅԱՆ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Արման ԵՂԻՉԱՐՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Սեյրան ՉԱԶԱՐՅԱՆ**, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Մարել ժԵՅՍՈ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Օլտին, Լեհաստան**)

**Նատալյա ԿՈՎԿԵԼ**, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Մինսկ, Բելառուս**)

**Վալենտինա ԼԱՊԵՎԱ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Մոսկվա, ՌԴ**)

**Օտտո ԼՈՒԻՏԵՐՅԱՆՂՏ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Համբուրգ, Գերմանիա**)

**Ռուզաննա ՀԱՎՈՔՅԱՆ**, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

**Իրինա ՀԱՅՈՒԿ**, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ (**Լվով, Ուկրաինա**)

**Նազիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Մուշեղ ՀՈՎՍԵՓՅԱՆ**, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գագիկ ԴԱՉԻՆՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Էդիկ ՄԻՆԱՅՅԱՆ**, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Կարեն ՆԵՐՍԻՍՅԱՆ**, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**Հայկ ՍԱՐԳՍՅԱՆ**, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Յուրի ՍՈՒՎԱՐՅԱՆ**, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**Մաքսիմ ՎԱՍԿՈՎ**, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (**Դոնի Ռոստով, ՌԴ**)

**Գարիկ ԶԵՌՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Տիգրան ԶՈՉԱՐՅԱՆ**, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գիտական Արցախ, № 2(5), 2020, Երևան, «ԱՐՑԱԽ» հրատարակչություն, 2020, 272 էջ:**

«Գիտական Արցախ» պարբերականի 2020թ. 2-րդ (5-րդ) համարում տեղ են գտել հասարակական գիտությունների արդի հիմնախնդիրների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը, Արցախի Հանրապետությունը, Բելառուսը, Դոնեցկի ժողովրդական Հանրապետությունը, Չինաստանը և Ռուսաստանի Դաշնությունը ներկայացնող մոտ երեք տասնյակ անվանի ու երիտասարդ գիտնականների աշխատանքները:

*The Issue is Recommended for Publication by the Editorial Council of the «Scientific Artsakh» Journal*

## **EDITORIAL COUNCIL**

**Chairman:** **Aram SIMONYAN**, Director of Institute for Armenian Studies of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

**Editor-in-Chief:** **Avetik HARUTYUNYAN**, Ph.D in Law, Associate Professor

**Deputy Editor-in-Chief:** **Tehmina MARUTYAN**, Ph.D in Philology, Associate Professor

### **Members:**

**Lena ASRYAN**, Doctor of History (**Tarragona, Spain**)

**Artsrun AVAGYAN**, Doctor of Philology, Professor

**Hrant AVANESYAN**, Doctor of Psychology, Professor

**David BABAYAN**, Doctor of History, Associate Professor

**Vahram BALAYAN**, Doctor of History, Professor

**Gevorg DANIELYAN**, Doctor of Law, Professor

**Khachik GALSTYAN**, Doctor of Political Sciences, Associate Professor

**Gagik GHAZINYAN**, Academician of NAS RA, Doctor of Law, Professor

**Vladislav GRUZDEV**, Doctor of Law, Professor (**Kostroma, Russia**)

**Julietta GYULAMIRYAN**, Doctor of Pedagogical Sciences, Professor

**Ruzanna HAKOBYAN**, Doctor of Law, Associate Professor

**Nazik HARUTYUNYAN**, Doctor of Pedagogical Sciences, Professor

**Irina HAYUK**, Ph.D in Philosophy, Associate Professor (**Lviv, Ukraine**)

**Mushegh HOVSEPYAN**, Doctor of Philology, Professor

**Garik KERYAN**, Doctor of Political Sciences, Professor

**Tigran KOCHARYAN**, Doctor of Political Sciences, Professor

**Natalia KOVKEL**, Ph.D in Law, Associate Professor (**Minsk, Belarus**)

**Valentina LAPAEVA**, Doctor of Law, Professor (**Moscow, Russia**)

**Otto LUCHTERHANDT**, Doctor of Law, Professor (**Hamburg, Germany**)

**Ashot MARKOSYAN**, Doctor of Economic Sciences, Professor

**Edik MINASYAN**, Doctor of History, Professor

**Karen NERSISYAN**, Ph.D in Economic Sciences, Associate Professor

**Hayk SARGSYAN**, Doctor of Economic Sciences, Professor

**Yuri SUVARYAN**, Academician of NAS RA, Doctor of Economic Sciences, Professor

**Maksim VASKOV**, Doctor of Sociology, Professor (**Rostov-on-Don, Russia**)

**Arman YEGHIAZARYAN**, Doctor of History, Associate Professor

**Seyran ZAKARYAN**, Doctor of Philosophy, Professor

**Marek ZEJMO**, Doctor of Political Sciences, Professor (**Olsztyn, Poland**)

**Scientific Artsakh, № 2(5), 2020, Yerevan, «ARTSAKH» Publishing House, 2020, 272 pages.**

The second (5<sup>th</sup>) issue of «Scientific Artsakh» journal 2020 comprises the scientific works of approximately 30 prominent and young scientists from Armenia, Artsakh, Belarus, China, Donetsk People's Republic and Russia on the topical issues of social sciences.

Номер рекомендован к публикации редакционным советом журнала «Научный Арцах»

## РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

**Председатель:** Арам СИМОНЯН, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор

**Главный редактор:** Аветик АРУТЮНЯН, кандидат юридических наук, доцент

**Заместитель главного редактора:** Теймина МАРУТЯН, кандидат филологических наук, доцент

### Члены:

Арцрун АВАГЯН, доктор филологических наук, профессор  
Грант АВАНЕСЯН, доктор психологических наук, профессор  
Рузанна АКОПЯН, доктор юридических наук, доцент  
Назик АРУТЮНЯН, доктор педагогических наук, профессор  
Лена АСРЯН, доктор исторических наук (Таррагона, Испания)  
Давид БАБАЯН, доктор исторических наук, доцент  
Ваграм БАЛАЯН, доктор исторических наук, профессор  
Максим ВАСЬКОВ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)  
Хачик ГАЛСТЯН, доктор политических наук, доцент  
Ирина ГАЮК, кандидат философских наук, доцент (Львов, Украина)  
Владислав ГРУЗДЕВ, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)  
Джюльетта ГЮЛАМИРЯН, доктор педагогических наук, профессор  
Геворг ДАНИЕЛЯН, доктор юридических наук, профессор  
Арман ЕГИАЗАРЯН, доктор исторических наук, доцент  
Марек ЖЕЙМО, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)  
Сейран ЗАКАРЯН, доктор философских наук, профессор  
Гагик КАЗИНЯН, академик НАН РА, доктор юридических наук, профессор  
Гарик КЕРЯН, доктор политических наук, профессор  
Наталья КОВКЕЛЬ, кандидат юридических наук, доцент (Минск, Беларусь)  
Тигран КОЧАРЯН, доктор политических наук, профессор  
Валентина ЛАПАЕВА, доктор юридических наук, профессор (Москва, Россия)  
Отто ЛЮХТЕРХАНДТ, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)  
Ашот МАРКОСЯН, доктор экономических наук, профессор  
Эдик МИНАСЯН, доктор исторических наук, профессор  
Карен НЕРСИСЯН, кандидат экономических наук, доцент  
Мушег ОВСЕПЯН, доктор филологических наук, профессор  
Гайк САРГСЯН, доктор экономических наук, профессор  
Юрий СУВАРЯН, академик НАН РА, доктор экономических наук, профессор

**Научный Арцах, № 2(5), 2020, Ереван, Издательство «АРЦАХ», 2020, 272 страницы.**

Во втором (5-ом) номере 2020 г. журнала «Научный Арцах» нашли место научные работы около 30 выдающихся и молодых ученых из Армении, Арцаха, Беларуси, Донецкой Народной Республики, Китая и России, в которых исследуются актуальные вопросы общественных наук.

**Նատալյա Կովկել.** Իրավունքի նշանագիտությունը. զարգացման Նոր հեռանկարները վիրտուալ ու մուլտիմոդալ աշխարհի պայմաններում.....72

**Natalia Kovkel.** Semiotics of Law: New Prospects for Development Under the Conditions of Virtual and Multimodal World

**Наталья Ковкель.** Семиотика права: новые перспективы развития в условиях виртуального и мультимодального мира

**Նադեժդա Խիլստովա.** Կարտելային համաձայնությունները պետական գնումների ոլորտում. հասկացությունը, տեսակները, պատասխանատվությունը.....82

**Nadezhda Khlystova.** Cartel Agreements in the Field of Public Purchases: Concept, Types, Responsibility

**Надежда Хлыстова.** Картельные сговоры в сфере государственных закупок: понятие, виды, ответственность

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, HISTORY, ИСТОРИЯ**

**Գեղամ Ասատրյան.** Մաքրավանքի՝ 1259 թվականի երկու խաչքարերի հորինվածքային առանձնահատկությունները.....92

**Gegham Asatryan.** Distinctive Features of Two Makravank Khachkars of 1259

**Гегам Асатрян.** Композиционные особенности двух хачкаров Макараванка 1259 г.

**Տիգրան Պետրոսյանց.** Վաչուտյանների զինանշանները (տոհմի ծագումնաբանական հիմքը)..... 104

**Tigran Petrosyants.** Vachutyans' Coats of Arms (Genealogical Basis of the Clan)

**Тигран Петросянц.** Гербы Вачутянов (генеалогическая основа рода)

**ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ORIENTAL STUDIES, ВОСТОКОВЕДЕНИЕ**

**Թերեզա Ամրյան.** Կրոնափոխությունը Հայաստանի եզդիների շրջանում..... 115

**Tereza Amryan.** Proselytism among Yezidis of Armenia

**Тереза Амрян.** Прозелитизм среди езидов Армении

**ԼԵՉԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, LINGUISTICS, ЛИНГВИСТИКА**

**Լուսինե Սողոմոնյան.** Գերմաներեն երկխոսության գործարանական առանձնահատկությունների շուրջ..... 123

**Lusine Soghomonyan.** Concerning the Pragmatic Peculiarities of German Dialogues

**Лусине Согомонян.** О прагматических особенностях диалогов в немецком языке

**ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, LITERATURE STUDY, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ**

**Թեմինա Մարության.** Հայոց պատմության երգիծական պատկերման փորձը Սիմոն Սիմոնյանի «Կը ինդրուի... խաչածեւել» ստեղծագործության մեջ..... 134

**Tehmina Marutyán.** An Attempt of Satirical Depiction of Armenian History in Simon Simonian’s Book «It Is Asked ... to Cross»

**Теймина Марутян.** Попытка сатирического изображения армянской истории в произведении Симона Симоняна «Просим... скрестить»



**ԳԵՐՄԱՆԵՐԵՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ\***

ՅՏԴ 811.112.2

**ԼՈՒՍԻՆԵ ՍՈՂՈՍՈՆՅԱՆ**

Երևանի Բրյուսովի անվան պետական համալսարանի  
մանկավարժության և լեզուների մեթոդիկայի ամբիոնի ասպիրանտ,  
թ.Երևան, Հայաստանի Հանրապետություն  
[Isoghomyan@mail.ru](mailto:Isoghomyan@mail.ru)

**Հոդվածի նպատակն է քննության առնել գերմաներեն երկխոսությունների գործաբանական առանձնահատկությունները հաղորդակցային իրադրություններում՝ «Գերմաներենը որպես օտար լեզու» դասագրքերի (Beste Freunde A2. 1/A2.2, Schritte Plus neu A2) երկխոսությունների հաշվառմամբ:**

**Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝ ուսումնասիրել հիմնախնդրի դրվածքը մեթոդական գրականությունում, վերլուծել դասագրքերում առկա երկխոսությունները տեսական դրույթների հիման վրա, ներկայացնել գերմաներեն երկխոսությունների հաղորդակցական-գործաբանական ռապմավարությունները:**

**Կիրառված մեթոդներն են՝ վերացարկում, համեմատություն, վերլուծություն, դեդուկցիա:**

**Հոդվածում ներկայացվում են գերմաներեն երկխոսություններին ներունակ խոսքային ակտերի գործառական առանձնահատկությունները խոսության կապակցվածության, հասցեատեր-հասցեագրող փոխապդեցության, թեմայի պարզացման տեսանկյունից:**

**Հաղորդակցական-գործաբանական կոմպետենցիայի շրջանակներում քննարկվում են երկխոսության մասնակիցների խոսքի փոխանակման ռապմավարությունները՝ վեր հանելով ակտիվ ու պասսիվ ունկնդիրների գործողությունները: Երկխոսությունների կառուցվածքային վերլուծության արդյունքում վերհանվում ու համակարգվում են նաև ապդակ-արծագանք հարաբերակցության տարաբնույթ դրսևորումները, ընդգծվում տարբեր հաղորդակցային նպատակներ արտահայտող նշույթների՝ որպես պրուցակապ գործիքակապի գործառույթները:**

**Հիմնաբառեր՝ հաղորդակցական-գործաբանական կոմպետենցիա, երկխոսության կառուցվածք, խոսույթ, խոսության նշույթ, խոսքային ակտ, ունկնդրման ռապմավարություն:**

Օտար լեզվի ժամանակակից դասին առօրյա իրավիճակներում պատշաճ, հնարավորինս ճշգրիտ հաղորդակցվելու և խոսքը հասկանալու կարողությունը

\* Հոդվածը ներկայացվել է 04.03.2020թ., գրախոսվել՝ 12.03.2020թ., տպագրության ընդունվել՝ 10.07.2020թ.:

ժամանակի հրամայականն է: Ինչպես Ֆորսթերն է նշում, օտար լեզվի ուսումնառության ժամանակ սովորողները պետք է զարգացնեն բանավոր հաղորդակցության այնպիսի հմտություններ, որպեսզի զրուցակցից, զրույցի վայրից և ժամանակից կախյալ կարողանան հաղորդակցվել օտար լեզվով, այն է՝ օտար լեզվով զրույց վարել<sup>247</sup>: Երկխոսնի պնդմամբ՝ երկխոսությունը բոլոր տեսակի հաղորդակցությունների հիմքն է, քանի որ երկխոսությունում ընկալողական ու վերարտադրողական իրազեկությունները միահյուսվում են<sup>248</sup>:

Ակներև է, որ երկխոսության արդյունավետ իրագործումը պայմանավորված է լեզվական կոմպետենցիայի առանձին ասպեկտների (քերականություն, բառապաշար, հնչյունաբանություն) և հարալեզվական գիտելիքների (թեմայի վերաբերյալ գիտելիքներ, խոսության գիտելիքներ) համակցված ուսուցմամբ:

Օտարալեզու ուսումնասիրություններն այդուհանդերձ ցույց են տալիս, որ բանավոր խոսքը ստուգելիս ու գնահատելիս մեծամասամբ առաջնահերթությունը տրվում է լեզվական գիտելիքին (հստակ ու ճշգրիտ արտահայտվել՝ ամբողջ նախադասությամբ, լեզվակրի արտասանությամբ), մինչդեռ երկխոսության ավելի բնորոշ հատկանիշները, ինչպես խոսքի հասցեագրումը, թեմայի զարգացումը, իրադրային իրավիճակներում խոսքային նմուշների կիրառումը դուրս են մղվում<sup>249</sup>: Այս առումով հատկանշական է Շրայթերի դիտարկումը, ըստ որի՝ լիարժեք ճշգրտությունը նախապայման չէ հաջող հաղորդակցության համար, այլ ավելի կարևոր է, որ հաղորդակցությունն ընդհանրապես տեղի է ունենում<sup>250</sup>: Շվիթալան ևս ընդգծում է, որ երկխոսության ստուգման, գնահատման համար կարևոր են ոչ միայն բուն լեզվական կոմպետենցիաները, այլև երկխոսություն սկսելու և ավարտելու ռազմավարությունները, խոսքի բաժանումը, փոխանակումը խոսակիցների միջև, տեղեկատվության գնահատումը, խոսքային նշույթները (Diskursmarker), ունկնդրի արձագանքը, ընկալածի հաստատումը, միմիկան<sup>251</sup>:

Գերմաներեն դիպլոմ (DSD I) ծրագրի<sup>252</sup> A2/B1 մակարդակի բանավոր քննության (երկխոսության) գնահատման չափանիշների ուսումնասիրությունը ևս վկայում է, որ առաջին պլան են մղվում խոսքային միջոցները՝ բառապաշար, կառույցներ, քերականություն, արտասանություն, այնինչ երկխոսության գործաբանական, մշակութային և հաղորդակցային կոնցեպտների ճշգրտությունն անուշադրության է մատնվում:

Գաղտնիք չէ, որ օտար լեզվի ուսումնառության գործընթացում հաղորդակցային տարբեր խնդիրների լուծումները պահանջում են գործաբանական, հանրալեզվական գիտելիքների համակցված կիրառում:

Մեթոդական գրականության մեջ գործաբանական կոմպետենցիան բնորոշվում է որպես լեզվական պաշարների գործառական կիրառում հաղորդակցման

<sup>247</sup> **Forster R.**, Mündliche Kommunikation in Deutsch als Fremdsprache: Gespräch und Rede (Sprechen und Verstehen/Schriften zur Sprechwissenschaft und Sprecherziehung), Röhrig Universitätsverlag, 1997, S.13.

<sup>248</sup> **Eriksson-Hotz B.**, Praxishandbuch für den Kompetenzbereich „Sprechen“ Deutsch Sekundarstufe I, Graz: Leykam, 2017, S. 17.

<sup>249</sup> **McNamara T.F.**, Measuring Second Language Performance, Longman, 1996, 215, **Luoma S.**, Assessing speaking. Cambridge: Cambridge University Press. 2004, S. 92.

<sup>250</sup> **Schreier I.** Mündliche Sprachproduktion. In: Helbig, Gerhard/ Götze, Lutz/ Henrici, Gert/ Krumm, Hans-Jürgen (Hrsg.): Deutsch als Fremdsprache. Ein internationales Handbuch. 2. Halbband. Berlin: De Gruyter Mouton, 2001, S. 911.

<sup>251</sup> **Schwitalla J.**, Das Verhältnis zwischen gesprochener und geschriebener Sprache. In: Krumm et. al. (s.o.), 2010, S. 429.

<sup>252</sup> Գերմաներեն լեզվի դիպլոմ (DSD) ծրագիրը գործում է Երևանի չորս դպրոցներում և Արմավիրի մարզի մեկ դպրոցում:



փոխներգործուն մեխանիզմներին համապատասխան՝ առնչվելով խոսույթի ստեղծման, իմաստային կապակցվածության հետ<sup>253</sup>:

Գործաբանական-խոսության կոմպետենցիայի միջոցով իրականացվում են հաղորդակցային նպատակներ խոսքային նշույթների կամ ավելի մեծ խոսության համատեքստերի շրջանակներում գրուցակցի հետ համագործակցությամբ սեփական արտահայտությունների միջոցով<sup>254</sup>: Երկխոսությունն այսպիսով գործաբանական հայեցակետից հատկանշվում է որպես երկկողմ հաղորդակցական փոխներգործություն՝ ապահովելով խթան-արձագանք հարաբերակցության հերթագայող, տրամաբանական երկմիասնությունը, հաղորդակցության արդյունավետությանն ուղղված խոսքային մարտավարական գործողությունների մշակումն ու իրագործումը: Եթե ի մի բերենք մեթոդական գրականությունում արծարծված երկխոսությունների գործառնությունները տարաբնույթ տիրույթներում, ապա վերջիններս հաղորդակցական-գործաբանական հայեցակետի տեսանկյունից կարող են բնութագրվել հետևյալ առանձնահատկությունների համալիր մոտեցմամբ.

- երկխոսության կառուցման ռազմավարություններ. երկխոսության փուլեր՝ սկիզբ, ընթացք, ավարտ,
- հասցեագրող-հասցեատեր ակտիվ փոխգործունեություն. ակտիվ ունկդիր,
- երկխոսության կապակցվածություն. խոսքի փոխանակման, թեմայի զարգացման կամ փոփոխության մեխանիզմների կիրառում համապատասխան խոսքային ակտերի ու նշույթների կիրառմամբ,
- ոչ խոսքային տարրերի ընկալում ու կիրառում,
- հասարակական նորմերի պահպանում. համապատասխան ռեգիստրների կիրառում:

Ավաճի լուսի ներքո սովորողները պետք է տիրապետեն գիտելիքների ու հմտությունների, համապատասխան արտահայտչամիջոցների, որոնց միջոցով կարող են սկսել զրույց, խոսք վերցնել, փոխանակել, ավարտել զրույցը, թեման փոխել, նաև հին թեմային անդրադառնալ<sup>255</sup>: Այս համատեքստում որոշիչ է հաղորդակցական տիպական իրադրություններում երկխոսության փուլերի և տևողության, զրուցակիցների փոխհարաբերությունների մակարդակի (քաղաքավարության նորմեր, հաղորդակցական ռեգիստրներ) և թեմայի վրա կենտրոնանալու ռազմավարության պահպանումը:

Հարկ է նշել, որ վերը նշված գերմաներեն ծրագիրն ուսումնասիրող դպրոցներում գործող «Գերմաներենը որպես օտար լեզու» դասագրքերի երկխոսական առաջադրանքները թույլ են տալիս սովորողներին ձեռք բերելու կարողություններ ու հմտություններ հաղորդակցական գործունեության իրագործելի իրադրությունների հաղթահարման համար՝ առաջարկություն անել, քաղաքավարի ինչ-որ բան խնդրել, ճանապարհը հարցնել, ինչ-որ բան պատվիրել և այլն (Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2):

Ստորև քննության առնենք գերմաներեն երկխոսության հաղորդակցական-գործաբանական գործառնությունները երկխոսության կառուցվածքի, հասցեատեր-հասցեագրող փոխազդեցության, ունկնդրի ռազմավարության (Hörerstrategie),

<sup>253</sup> Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Ստրասբուրգ, Կրթության հարցերով պատասխանատու հանձնաժողով, Լեզվի քաղաքականության վարչություն, Թարգմանություն, խմբագրությամբ՝ **Ս. Չոյան, Ս. Աստվածատրյան և ուրիշներ**, Երևան, 2005, էջ 16:

<sup>254</sup> **Becker –Mrotzek M.**, Gesprächskompetenz vermitteln und ermitteln: Gute Aufgaben im Bereich Sprechen und Zuhören. In: A. Bremsreich-Vos, G. Granzer, O. Köller (Hrsg.): Lernstandsbestimmung im Fach Deutsch. Gute Aufgaben für den Unterricht, Weinheim und Basel, 2008 (Beltz), S. 59.

<sup>255</sup> **Knapp-Potthoff A.**, Fremdsprachenunterricht in Knapp et al: Angewandte Linguistik, Tübingen: Francke, 2004, S. 375.

խոսութային կապակցվածության (Diskurskohärenz) դիտանկյունից խոսութային նշույթների (Diskursmarker), խոսքային ակտերի (Sprechakte)<sup>256</sup> տարաբնույթ դրսևորումների հաշվառմամբ:

*Երկխոսության կառուցում*

Գերմաներեն երկխոսություններում խոսողները կիրառում են զրույցը սկսելու, ավարտելու, ընթացքը կառավարելու ռազմավարություններ, որոնք նախանշում են հաղորդակցային իրավիճակում համապատասխան ինտերակտիվ նորմերի իմացություն: Ըստ այդմ, ներկայացնենք տարբեր հաղորդակցական մտադրություններ արտահայտող առավել հաճախակի գործածվող խոսքային ակտեր, նշույթներ, որոնք ապահովում են երկխոսության տարբեր փուլերի հաղթահարման համար խոսքային փոխգործունեության գործառական կիրառումը:

*Երկխոսություն սկսելու ռազմավարություններ*

- Ողջույն՝ արտահայտված նաև զգացական ծայնարկություններով.  
*Hy, he, Hallo(ողջույն), Oje, Ey, Hey (Է՛յ,հե՛յ), Boah(պահ), Mann (զարմանք կամ բարկություն արտահայտող ձայնարկություն)*
- դիմում-հաղորդում (ծայնարկությամբ սկսվող)  
*Wow, Du, das ist ja eine tolle Wohnung! Վառւ, Դու, ի՛նչ հիանալի բնակարան է:*
- Հարց (դիմում-հարց, հարց ծայնարկությամբ)  
*Elina, gefällt dir...? Էլինա՛, թե՛վ դու՞՞ր է գալիս...*  
*Na, wie schmeckt der Kaffee? Դե, ինչպե՞ս է սուրճը:*
- Ներողություն-հարց  
*Entschuldigung? Gehört dir das Handy? Ներողություն: Թե՛՛վ է պատկանում հեռախոսը:*
- Հորդոր *mal* եղանակավորող մասնիկով  
*Schau mal hier... Նայի՛ր այստեղ...Sag mal...Ասա՛ (խնդրել)...*
- Սողալ բայերով արտահայտված խոսքային ակտեր  
*Sollen (Wollen) wir in den Park gehen? Գնա՞նք այգի: (Առաջարկություն)*  
*Können wir bestellen bitte? Կարո՞ղ ենք պատվիրել: (Հարց-խնդրանք)*
- Կարծիք  
*Ich glaube, dass... Կարծում եմ, որ...*<sup>257</sup>

Վերոբերյալ դասակարգման համաձայն՝ կարող ենք պնդել, որ գերմաներեն երկխոսության կառուցմանը բնորոշ են տարբեր զգացական ծայնարկություններ՝ միաժամանակ ապահովելով արտահայտչականություն և կառուցողականություն: Առանձնացնենք նաև այս փուլին ներուկակ *Entschuldigung! Ներողություն* խոսքային ակտը, որի միջոցով խոսողը արտահայտվելուց առաջ քաղաքավարությամբ ըմբռնում է հայցում խոսակցից՝ հարցին հաղորդելով մեղմացուցիչ երանգավորում:

Գերակայում են նաև *mal* եղանակավորող նշույթով հորդոր արտահայտող խոսքային նշույթները (*Erzähl mal...*), որոնք գլխավորապես ներկայացվելիք նյութի վրա դիմացինի ուշադրությունն ուղղելու գործառույթ ունեն: Ընդամին, մեթոդական գրականության մեջ սույն կառույցները *he, hallo, Mensch* ողջույն արտահայտող նշույթների հետ միասին ստանձնում են միջանձնային հարաբերություններն

<sup>256</sup> խոսքային ակտերի տեսությունը մշակվել է **Ջ.Օստինի** կողմից (“How to Do Things with Words”, 1962), ապա վերամշակվել **Ջ. Սեռլի** կողմից (“Speech acts”, 1969)

<sup>257</sup> Օրինակները վերցված են Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2 դասագրքերից **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, 2014, **Hilpert S., Niebisch D., u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017.

արտահայտող նշույթների գործառույթ (Interpersonalitätsmarker)՝ ընդգծելով հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունների մակարդակը<sup>258</sup> :

Երկխոսության բացման տեսանկյունից պակաս կարևոր չեն նաև խնդրանք (*Können wir...?*), առաջարկ (*Sollen wir...? Wollen wir...?*) արտահայտող մոդալ բայերով ոչ ուղղակի խոսքային ակտերը (indirekte Sprechakte): Հատկանշական է նաև կարծիք արտահայտող այնպիսի կառույցների կիրառումը, ինչպես *ich glaube, dass....*, որոնք, ապահովելով խոսքի կապակցվածությունը, տրամադրում են լրացուցիչ տեղեկություն:

Թեպետ նմանօրինակ արտահայտությունների կիրառումը, ինչ խոսք, պայմանավորված է երկխոսության թեմայով, նպատակով, իրավիճակով, բայց և այնպես փաստենք, որ դրանք, որոշակի բովանդակային փոփոխությունների ենթարկվելով, կարող են կիրառվել տարաբնույթ իրադրություններում՝ պահպանելով կուռ կառուցվածքը և ստանձնելով զրուցակազմ գործառույթի դեր:

*Երկխոսության ընթացք. թեմայի պարզացում*

Հարկ է նշել, որ երկխոսության այս փուլը համեմատաբար քիչ հետազոտվածներից է՝ ելնելով կառուցվածքային բարդության աստիճանից, ոչ ստանդարտ բնույթից: Այս փուլում վճռորոշ է լեզուն կիրառողների խոսքի փոխանակման մարտավարությունը (Sprecherwechsel), ինչն էլ կարգաբերում է խոսույթի կապակցվածությունը, թեմայի զարգացումը (Themenentwicklung) կամ թեմայի փոփոխումը (Thementwechsel): Հետազոտողների կողմից խոսքի փոխանակման երկու ձև է առանձնացվում<sup>259</sup> :

### 1. Խոսողը խոսքը փոխանցում է ունկնդրին (Fremdwahl)

*Fabio, hey, du sollst hier mit uns Hausaufgaben machen!*

*Und du? Wie oft ärgerst du dich?*

*Ey, hallo, sag mal, ist das mein Handy?*<sup>260</sup>

Ուսումնասիրությունից հետևում է, որ խոսքի ուղղակի փոխանցումը տեղի է ունենում հիմնականում մասնակիցների՝ միջանձնային հարաբերություններն արտահայտող նշույթներով (*hey, Ey, Und du?, Sag mal*)՝ միաժամանակ խթանելով խոսքի կապակցվածությունն ու արտահայտչականությունը:

Խոսքի փոխանակման այս փուլում կարևոր ենք համարում վկայակոչել ունկնդրի՝ երկար դադարով խոսք վերցնելու ռազմավարությունը:

*Reiter: Und was möchtest du machen? Hast du schon eine Idee?*

*Jonas: Hmm. Ich weiß nicht, es gibt ja so viel ...*<sup>261</sup>

Սույն օրինակներում *hm, ich weiß nicht* նշույթները վարանման ազդանշան են (Verzögerungssignal) և արտահայտում են խոսակցի մտորումը:

Ընդ որում, բովանդակային կողմից զատ խոսքի փոխանցումը կարող է նաև ոչ խոսքային միջոցներով տեղի ունենալ, օրինակ՝ գլխի շարժումով, ժեստով, հայացքով<sup>262</sup>:

### 2. Ունկնդիրը սկսում է խոսել սեփական նախաձեռնությամբ (Selbstwahl)

<sup>258</sup> Blühdorn H., Föhlen A., Loureda Ó., Diskursmarker: Begriffsgeschichte – Theorie – Beschreibung. Ein bibliographischer Überblick. In: Blühdorn H., Deppermann A., Helmer H., Spranz-Fogasy Th. (Hg.): Diskursmarker im Deutschen. Reflexionen und Analysen. Göttingen: Verlag für Gesprächsforschung, 2017, S.7-48, S.24.

<sup>259</sup> Brinker K., Sager S. F., Linguistische Gesprächsanalyse: Eine Einführung, Berlin, Erich Schmidt Verlag GmbH & Co., 2010, S.62.

<sup>260</sup> Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2, Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015.

<sup>261</sup> Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, S.17

<sup>262</sup> J. Ossner, Sprachdidaktik Deutsch. Eine Einführung, 2. Auflage. utb Schöningh, Paderborn 2008, S.76.

Եթե համակարգենք մեթոդական գրականության մեջ այս փուլի ենթատեսակները՝ դասագրքերում առկա երկխոսությունների հաշվառմամբ, ապա այս դեպքում երևան կգան խոսք վերցնելու հետևյալ դրսևորումները.

- խոսք վերցնել *առանց ընդհատման*

>Ich denke gern an die Ferien.

<Daran denke ich auch gern.<sup>263</sup>

- խոսք վերցնել *ընդհատումով* (ունկնդիրը սկսում է խոսել, երբ դեռ խոսողը միտքը չի ավարտել կամ մի փոքր դադար է տալիս)

F. Wir können ihr alles zeigen, den Rhein, die Brücken, den Kölner Dom...

L. ...die Stadtfeste...

F. Genau, und den Kölner Dom<sup>264</sup>

Այսպիսի իրավիճակներ ի հայտ են գալիս, երբ խոսողը ընթացքում մտորում է, ինչպես վերոբերյալ օրինակում՝ թվարկելիս:

- խոսք վերցնել *երկար դադարով կամ լռությամբ*

A. In Köln haben wir gar nichts gesehen. Das Wetter war viel zu schlecht.

T. Oh, das ist doof!<sup>265</sup>

Այստեղ *oh* զգացական նշույթը դադարի նշան է:

Այսպես, երկխոսությունների՝ խոսքի փոխանակման հայեցակերպից ուսումնասիրությունը մատնանշում է, որ վարանում արտահայտող ազդանշանների շարքին են դասվում *hm, aha, weißt du, äh (ja), öh, oh ja, tja, also, na ja, na, Moment (mal), ich weiß nicht, ich glaube, warte mal, ach so, ach ja, boah* նշույթները<sup>266</sup>: Շթայնի հավաստմամբ՝ այս նշույթները, արտահայտելով վարանման իմաստ, մյուս կողմից նպաստում են թեմատիկ պլանավորմանը<sup>267</sup>: Մենք ևս հակված ենք հեղինակի կարծիքին, քանի որ երկխոսությունները դիտարկելիս ի հայտ են գալիս վերոբերյալ նշույթների՝ տեքստակազմիչ գործառնույթների դերը:

*Na, wie schmeckt der Eiskaffee?*<sup>268</sup>

Օրինակում *na* նշույթը զրոյցը կառուցելու դեր է ստանձնում:

Այս փուլում հարկ ենք համարում անդրադառնալ նաև խոսողի ինքնաուղղման մեխանիզմների առանձնահատկություններին: Այս դեպքում երկար դադարից խուսափելու, իր խոսքը երկարաձգելու համար խոսողը կարող է կիրառել վերաձևակերպման կամ (ինքնա)ուղղման նշույթներ (Reformulierungsmarker, (Selbst)Reparaturmarker)<sup>269</sup>:

*Op. Und was machen Sie am Nachmittag, ich meine, außer im Fluss zu schwimmen?*<sup>270</sup>

<sup>263</sup> Hilpert S., Niebisch u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, 2017, S. 62

<sup>264</sup> Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2014, S.7

<sup>265</sup> Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, S.47

<sup>266</sup> Georgiakaki M., Seuthe Ch. u.a., Beste Freunde: Kursbuch A2.1, Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, Georgiakaki M., Seuthe Ch., u.a., Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, (1) 2017

<sup>267</sup> Stein St., „o leck! ich wä:ß nimme: wie das heißt“ Formulierungsflauten in der Zweitsprache. In: Beiträge zur Fremdsprachenvermittlung 31, 1997, S. 33–77, S.58

<sup>268</sup> Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, (1)Hueber, 2017, S.44

<sup>269</sup> Հասկացության վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Pfeiffer M. Über die Funktion der Reparaturmarker im Deutschen In: Blühdorn H., Deppermann A., Helmer H., Spranz-Fogasy Th. (Hg.): Diskursmarker im Deutschen. Reflexionen und Analysen. Göttingen: Verlag für Gesprächsforschung, 2017, S.259–285

<sup>270</sup> Hilpert S., Niebisch D., u.a., Schritte Plus Neu:3+4 Niveau A2, (1)Hueber, 2017, S.98

Օրինակում *ich meine (նկատի ունեմ)* նշույթի միջոցով խոսողը հստակեցնում է ասածը: Այս նշույթներից են *also, eben, ich meinte, man sollte, nee, ach, oder, also, na*.<sup>271</sup>:

Վերոբերյալ նշույթների (վարանում և մտքի վերաձևակերպում արտահայտող) կիրառման առանձնահատկությունների ուսումնասիրությամբ կարող ենք պնդել, որ թեպետ դրանց՝ առանձին տեսակների դասակարգմանը, վերջիններս նույնականացվում են՝ արտացոլելով դադարի իմաստ:

Այսպես, պարզ է դառնում, որ երկխոսությունն ընթացքի մեջ պահելու հմտությունը կախված է խոսող-խոսակից փոխազդեցությունն ապահովող ռազմավարությունների ճշգրիտ կիրառումից, որտեղ վճռորոշ է ունկնդրի ներգրավվածությունը: Հատկանշական է, որ վերջին տարիներին մեթոդիստների կողմից մեծ ուշադրության է արժանանում ակտիվ ունկնդրի դերը երկխոսության ընթացքում <sup>272</sup>: Սակայն ոչ միայն ակտիվ ունկնդրին է բնորոշ որոշակի դեր, այլև պասսիվ ունկնդիրն է պահանջում տիպիկ երկխոսական գործողություններ: Այս դեպքում պասսիվ ունկնդրի ռազմավարություններին բնորոշ է որոշակի հետադարձ կապ, որը կարող է արտահայտվել խոսողի խոսքին զուգահեռ՝ առանց իրեն խանգարելու: Այստեղ տարբերակվում են <sup>273</sup>:

- ուշադրություն առաջացնող ազդանշաններ, (*aufmerksamkeitsbezeugende Signale*), որոնք ցույց են տալիս, որ ունկնդիրը ուշադիր լսում է, օրինակ *hm, ja, nicht, jaja, ach ja, genau, eben, tja*,
- մեկնաբանող ազդանշաններ(*kommentierende Signale*), որոնք մատնանշում են ունկնդրի վերաբերմունքը ասվածին՝ որպես համաձայնություն(*Einverstanden*), կասկած(*Wirklich?*):

Ասվածի համաձայն՝ երկխոսությունն ընդգրկում է ոչ միայն վերարտադրողական հմտություններ, այլ նաև լածին տարաբնույթ հաղորդակցային նպատակներով արձագանքելու հմտություններ: Քննության առնելով *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2* դասագրքերում առկա երկխոսությունները՝ ներկայացնենք և համակարգենք ազդակ-արձագանք փոխկապակցման հետևյալ տեսակները.

### 1. Ազդակ-արձագանք փոխազդեցության դասակարգում <sup>274</sup>

Հարց-համաձայնեցում	
Ist Bäcker dein Traumberuf? Ja, genau.	Հացթուխը քո երազած մասնագիտությունն է: Այո՛, ճիշտ է:
Կարծիք- համաձայնեցում	
Ich finde, das sieht schön aus.	Կարծում եմ՝ զեղեցիկ տեսք ունի:

<sup>271</sup> **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber(1), 2015, **Hilpert S.,Niebisch D.**, u.a.,Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber(1), 2017

<sup>272</sup> **Wagner R. W.**, Mündliche Kommunikation in der Schule.Paderborn Schöningh, 2006,S.197, **Spiegel C., Berkemeier A.**,In der Schule Gesprächsfähigkeit fördern und fördern: Moderieren-Argumentieren-Zuhören, Bern, 2014,S. 126

<sup>273</sup> **Linke A., Nussbaumer M., Portman R.P.**, Reihe Germanistische Linguistik (Book 121), Max Niemeyer Verlag, Tübingen, 2004,S. 305

<sup>274</sup> Օրինակները՝ **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber,(1) 2014, **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber,(1) 2015, **Hilpert S.,Niebisch D.** u.a.,Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber,(1) 2017

Ja, das finde ich auch.	Այո՛, ես էլ եմ այդպես կարծում:
<b>Հարց-պատասխան- վերաբերմունք</b>	
Oh, was ist das denn? <i>Ein Zelt.</i> <i>Das ist aber gross!</i>	Օհ, ի՞նչ է սա: <i>Կրակ:</i> <i>Ի՞նչ մեծ է:</i>
<b>Խթան-հարց (պարզաբանելու համար)</b>	
Aber ich will doch zum Casting! Wie bitte? Casting?	Բայց ես ուզում եմ Քասթինգի: Ինչպե՞ս: Քասթինգի՞:
<b>Առաջարկ-զարմանք/համաձայնեցում</b>	
Dann komm doch nächstes Jahr mit! Echt? Gern.	Ուրեմն մյուս տարի արի ինձ հետ: Իսկապե՞ս: Սիրով:
<b>Առաջարկ-մերժում</b>	
Gehen wir schwimmen? Nein, es ist zu kalt.	Գնա՞նք լողալու: Ո՛չ, ցուրտ է:
<b>Պնդում- ժխտում /համաձայնում</b>	
Du singst so gut wie Celine Dion. Nein! Ich singe sogar besser als Celine Dion.  Sie mag am liebsten Hip-Hop. Ja, genau.	Դու երգում ես այնպես լավ, ինչպես Սելին Դիոնը: Ո՛չ: Ես նույնիսկ ավելի լավ եմ երգում, քան Սելին Դիոնը: Նա ամենից շատ հիփ-հոփ է սիրում: Այո՛, ճիշտ է:
<b>Խթան-ներողություն- դրական/բացասական արձագանք</b>	
Entschuldige, dass ich zu spät komme! Kein Problem!/Das macht nichts. Das finde ich nicht so gut.	Ներողություն, որ ես այսքան ուշ եմ գալիս: Ոչ մի խնդիր: Ոչինչ: Այդքան էլ լավ չէ:
<b>Հարց-հարց</b>	
Aber ist es nicht 'n bisschen eng? Wieso denn eng?	Բայց սա մի փոքր նեղ չէ՞: Ինչպե՞ս թե նեղ:

Ուսումնասիրությունից հետևում է, որ երկխոսությունները հաղորդակցային իրադրությունում միայն հարց ու պատասխանով չեն սահմանագծվում: Ավելին, երկխոսությունում խոսության կապակցվածության նախադրյալ են տարաբնույթ մտադրություն պարունակող ասոյթներին (առաջարկություն, կարծիք և այլն) հաստատում, որգևորություն և այլ վերաբերմունք արտահայտող արձագանքները: Ընդ որում, խթան-պատասխան հարաբերակցումը մեծապես խթանում են տարբեր արձագանքներ հաղորդող խոսության նշույթները (*Ja, genau, Echt?, Schon okay*): Ինչպես նաև առանձնակի կարևորվում է եղանակավորող նշույթների (Modalpartikel)<sup>275</sup> (ինչպես օրինակներում *mal, aber, denn*)՝ որպես գրուցակազմ գործիքների դերը երկխոսության կապակցվածության, թեման զարգացնելու, հասցեագրողի հաղորդակցական-

275

Գերմաներենի եղանակավորող մասնիկների տիպաբանական առանձնահատկությունները գործաբանական բնութագրերի հաշվառումով հանգամանալից քննել է Կ. Հովհաննիսյանը՝ «Գերմաներենի եղանակավորող մասնիկների տիպաբանական առանձնահատկությունները», ատենախոսություն՝ Ժ.02.07-«Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Կ.Մ.Հովհաննիսյան, Երևան 2013, 151 էջ:

գործաբանական նպատակների համար: Վերը քննարկված *mal (Sag mal)* եղանակավոր նշույթը, հորդոր արտահայտող նախադասություններին հաղորդելով մեղմացող, խնդրանք պարունակող իմաստ, կատարում է զրույցը սկսելու գործառնություն:

Ընդգծենք, որ ազդակ-արձագանք տարաբնույթ խոսքային ակտերը հիմք են նաև թեմայի փոփոխության համար: Ներքենշյալ օրինակում արտացոլված է թեմայի փոփոխության ռազմավարության մի ձև.

*Reiter: Aha ... Ja, weißt du, Jonas, ich denke, es ist auf jeden Fall sehr wichtig, dass du zuerst einmal die Schule zu Ende machst. Nur so kannst du später auch einen guten Beruf lernen.*

*Jonas: Ja, ja, ich weiß schon. Das sagen meine Eltern auch immer. Aber ...*

*Reiter: Pass auf, ich habe da eine Idee. Warum machst du nicht einfach ein Praktikum in den Sommerferien? So kannst du verschiedene Berufe kennenlernen. Was meinst du?*<sup>276</sup>

Նշված օրինակում *Pass auf*<sup>277</sup>, *ich habe da eine Idee* կառույցները հող են նախապատրաստում նոր ենթաթեմայի անցման համար, իսկ *Warum machst du nicht einfach ein Praktikum in den Sommerferien?* հարց-առաջարկությունը փոխում է թեման՝ շարունակելով զարգացնել և ուժգնացնել սեփական պնդումը, ինչպես *So kannst du verschiedene Berufe kennenlernen.:* Ապա արդեն նոր թեման ընթացքի մեջ պահելու և այն ընդարձակելու համար տրվում է հարց խոսակցի կարծիքն իմանալու համար. *Was meinst du?*

Երկխոսության գործաբանական առանձնահատկությունները դրսևորվում են նաև ավարտուն խոսքում՝ արտացոլելով տվյալ մշակույթին բնորոշ հասարակական նորմերը: Բացի վերը քննարկված ազդակ-արձագանք արտահայտություններում առկա համաձայնություն (*richtig, Warum nicht?, In Ordnung*), դրական (*Kein Problem*), բացասական արձագանք (*Das finde ich nicht so toll*), շնորհակալություն (*Vielen Dank!*) մատնանշող խոսքային ակտերից, գերմաներեն երկխոսությունների ավարտուն խոսքին բնորոշ են.

- Բարեմաղթանք - *Alles Gute für dich! Ամենայն բարիք թեյ:*
- Հարց- *Hier ist es doch gut, oder? Այստեղ լավ է, թե՞: Na und? Դե, հեռո՞: Verstehst du? Հասկանո՞ւմ ես:*
- Կարեկցանք/հիասթափություն- *Das tut mir so leid. Տալում եմ: Wie schade./Schade Ի՞նչ ափսոս:*
- Առաջարկության մերժում *Ich möchte lieber... Ես կցանկանայի ավելի շուտ...*
- Ժխտում/հակադրում- *Das stimmt nicht. Եիշտ չէ:*
- Հորդոր- *Komm bald mal wieder! Արի կրկին:*
- Ստադրություն- *Ich schau mal nach. Ես կնայեմ:*
- Չզացական վերաբերմունք- *Ich freu mich schon! Ես ուրախանում եմ արդեն: Das ist aber nett. Շատ սիրալիր է:*<sup>278</sup>

Սույն արտահայտություններից կարելի է եզրակացնել, որ երկխոսությունն ավարտելու տարբերակները գերմաներենում բազմապիսի են՝ տարաբնույթ հաղորդակցային նպատակներ, գնահատումներ արտահայտող անփոփոխ

<sup>276</sup> **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2015, S.47

<sup>277</sup> Pass auf-ը խոսքային նշույթի գործառնություն ունի, ավելի մանրամասն տես **Proske N.,** Zur Funktion und Klassifikation gesprächsorganisatorischer Imperative In: **Blühdorn H., Deppermann A., Helmer H., Spranz-Fogasy Th.** (Hg.): Diskursmarker im Deutschen. Reflexionen und Analysen. Göttingen: Verlag für Gesprächsforschung, 2017, S.73-101

<sup>278</sup> **Georgiakaki M., Seuthe Ch., u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.1 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1) 2014, **Georgiakaki M., Seuthe Ch. u.a.**, Beste Freunde: Kursbuch A2.2 Deutsch für Jugendliche, München, Hueber, (1)2015, **Hilpert S., Niebisch D. u.a.**, Schritte Plus Neu:3+4 Niveau A2, Hueber, (1)2017

արտահայտություններից (*Stimmt, tut mir leid...*) մինչև ապառնիի իմաստ՝ մտադրություն (*Ich schau mal nach*), և հարց, հորդոր պարունակող ասույթներ (*Cool, oder?, Traum weiter, Fabio!*): Պետք է նշել, որ *oder?* կառույցը, զրույցի ավարտի ազդանշան լինելով, միաժամանակ ունկնդրի համար խթան է խոսողի դերում հանդես գալու համար<sup>279</sup>, ինչը խոսքի փոխանակմանն է տանում:

Այսպիսով՝ հոդվածում ներկայացրինք գերմաներեն երկխոսության կառուցման, վերջինիս ընթացքը կառավարելու գործում ուրույն տեղ զբաղեցնող գործոնները: Բայց և այնպես նշենք, որ հոդվածում քննարկված բաղադրիչներից զատ երկխոսության հաղորդակցական-գործաբանական արժեքը պայմանավորված է նաև տարիքային, անձնային-հոգեբանական գործոնների հաշվառմամբ: Չէ՞ որ զրուցակիցների տրամադրվածությունը կարող է այս կամ այն կերպ ազդել զրույցի ընթացքի վրա:

Կարևոր է նաև արձանագրել, որ բերված երկխոսական նմուշները բնորոշ են առօրյա իրավիճակներին, հետևապես նշանակալից է նման խոսութային նշույթների, ակտերի ուսուցումն ու ուսումնառությունը իրադրային տարբեր իրավիճակներ հաղթահարելու, խոսույթի կապակցվածությունը, գաղափարական համագործակցությունն ապահովելու, խոսքին տարբեր եղանակավորումներ տալու, գնահատականներ տալու, մեկնաբանելու համար: Չէ՞ որ երկխոսության գործաբանական ասպեկտը հենց այս կոմպետենցիաների համալիր կիրառմամբ կարող է իրագործվել օտար լեզվով հաղորդակցման ժամանակ՝ պահանջելով համակարգված մոտեցում:

Գերմաներեն երկխոսության հաղորդակցական-գործաբանական հայեցակերպի այս վերլուծությունը կարող է հիմք լինել երկխոսության ռազմավարությունների ուսուցման նոր ուղիների մշակման, երկխոսության գնահատման չափանիշների լրամշակման համար, ասել է թե՛ երկխոսության հետ տարվող աշխատանքները, պայմանավորված արդի հաղորդակցական ուսուցման գերակայությամբ, նոր մոտեցումներով դիտարկելու համար:

## CONCERNING THE PRAGMATIC PECULIARITIES OF GERMAN DIALOGUES

LUSINE SOGHOMONYAN

*Brusov State University, Pedagogy and Language Teaching Chair,  
Ph.D student,  
Yerevan, Republic of Armenia*

The aim of the current article is to study the pragmatic peculiarities of German dialogues in communicative situations (based on German textbooks *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2*).

The objectives are as follows: to study the essence of the set problem in methodical literature, to analyze dialogues in textbooks based on theoretical theses, to identify the communicative-pragmatic strategies of German dialogues.

The study was carried out with the use of the following methods: abstraction, comparison, analysis, deduction.

The article presents the functional peculiarities of German speech acts from the point of view of discourse coherence, sender-receiver interaction, topic development. Within the

<sup>279</sup> Weinrich H., *Textgrammatik der deutschen Sprache*, Hildesheim, Georg Olms Verlag, 2007, S.



framework of communicative-pragmatic competence, the strategies for turn-taking of dialogue participants are discussed, revealing the activities of active and passive listeners. As well as as a result of the structural analysis of the dialogues various manifestations of the stimulus-response relationship is singled out and coordinated, and the functions of discourse markers, as a tool for dialogue coherence are emphasized, expressing different communicative goals of speakers.

**Keywords:** *communicative-pragmatic competence, structure of dialogue, speech act, discourse marker, discourse, listening strategies.*

## **О ПРАГМАТИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ДИАЛОГОВ В НЕМЕЦКОМ ЯЗЫКЕ**

**ЛУСИНЕ СОГОМОНЯН**

*аспирант кафедры педагогики и  
методики преподавания языков ГУ им. В. Брюсова,  
г.Ереван, Республика Армения*

Целью данной статьи является изучение прагматических особенностей немецких диалогов в коммуникативных ситуациях (на материале учебников немецкого языка *Beste Freunde A2.1/A2.2, Schritte Plus neu A2*).

В задачи исследования входит: изучение поставленных задач в теории, анализ диалогов в учебниках на основе теоретических тезисов, выявление коммуникативно-прагматической стратегии немецких диалогов.

Исследование проводилось с помощью следующих методов: абстрагирование, сравнение, анализ, дедукция.

В статье представлены свойственные немецким диалогам функциональные особенности речевых актов с точки зрения дискурсивной когерентности, адресантно-адресатного взаимодействия, развития темы. В рамках коммуникативно-прагматической компетенции обсуждаются стратегии смены ролей участников диалога, выявляя действия активных и пассивных слушателей.

В результате структурного анализа диалогов представлены и скоординированы различные проявления отношений стимул-реакция, подчеркиваются функции дискурсивных маркеров как инструментария для связности диалога, выражающих разные коммуникативные цели говорящих.

**Ключевые слова:** *коммуникативно-прагматическая компетенция, структура диалога, речевой акт, речевой маркер, дискурс, стратегии аудирования.*